№ № 10-11 ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԱՂԲԻՒՐ-ԳԱՍՏԻԱՐԱԿ

1907 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ №№ 10-11

Մկրտիչ Ա. Վեհափառ կաթուղիկոս... Պատկեր
Մահգոյժ Նորին Օծութեան ամենայն հայոց կաթուղիկոսի.
Մկրտիչ Ա. Ազգապետ Թորգոմեան տոհմի...—Պատկեր
Մահգոյժ Պերճ Պռօշեանցի.
Պերճ Պռօշեանց—Պատկեր
Հայկական գեղագրեր XIII դդ. դար. Ս. Էջմիածնայ ազգային Մատենադարանում:
Պերճ Պռօշեանցի յիշատակին—Գէորգ Բարխուդարեան
Պերճ Պռօշեանց—Իսահակ Յարութիւնեան
Ուխտաւորները Սանահնում—Պատկեր
Սանահին վանուց ճնճղուկ (անտիպ նորագոյն բանաստեղծութիւն) գրեց ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ
Հայոց Հայրիկը Մեսրոպի այգում—Պատկեր
Արծուիկ (զրոյց) Դր. Զուքար
Հայոց Հայրիկը դագաղում—Պատկեր
Հայրիկի յիշատակին (բանաստեղծ.) Յար. Պետրոսեան
Ըղձանք խաչին (բանաստեղծ) Արցունք
Միանձնուհի—Պատկեր
Հայրիկեան թանգարան ս. Էջմիածնում—Պատկեր
Հայոց Հայրիկի կեանքից, ժողովեց Ն. Վ. Տ. Աւետիքեան
Զօրականի որդին՝ Գիշերւան անցքը—Պ. Մոծոռեանց

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ և ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ կենսագրութիւնները մանկական հասակի համար կը տպագրուին ԱՂԲԻՒՐՈՒՄ առաջիկայ 1908 թ.

ԱՂԲԻՒՐԻ դեկտեմբերի №-ը լոյս կը տեսնի առաջիկայ շաբաթ, որով և կը փակուի ԱՂԲԻՒՐԻ XXV-րդ տարեշրջանը:

ԱՂԲԻՒՐԻ XXVI-րդ և ՏԱՐԱԶԻ XIX-րդ տարեշրջանների, 1908 թ. բաժանորդագրութիւնը այսօրւանից բացւած է: Տարեկան բաժանորդագինը երկու հանդէսների համար 10 ր., արտասահման 50 ֆր.

Ներկայ 1907 թ. այն բաժանորդները, որոնք ստանալու են ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ առաջիկայ 1908 թ. 10 ր. փոխարէն պէտք է ուղարկեն 9 ր, (1 ր. պահելով ԳԵՂԱՓՆՋԻԿԻ պակաս №№-ի արժէքը): Իսկ նրանք որոնք չը պիտի վերանորոգեն 1908 թ. իրանց բաժանորդագրութիւնը կարող են վերադարձնել մեզ իրանց ուղարկւած ԳԵՂԱՓՆՋԻԿԻ №№ և պրէմիաները ու լիովին ստանալ ԳԵՂԱՓՆՋԻԿԻ համար վճարած 2 ր.: 1908 թ. փետրւարի մէկից յետոյ խմբագրութեանս գրասենեակը այլևս պարտաւոր չէ լինելու ոչ մի արտունչ հին բաժանորդներից լսելու:

ԱՂԲԻՒՐ-ԴԱՍՏԻԱՐԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԱՂՈՒՆԻՑ

XXV-ՐԴ ՏԱՐԻ

№№ 10-11 ՀՈԿՏ.-ՆՈՅԵՄԲԵՐ 1907 Թ.



ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԻԻՆ

ՄԿՐՏԻՉ Ա.

Վեհափառ Կաթուղիկոս Ամենայն Հայոց

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

ՄԿՐՏԻՉ Ա.

հանգեաւ ի Տէր

29 հոկտեմբերի 1907 թ. երկուշաբթի առ. 9 ժամին

Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարմինը ամփոփուեց Ս. Տաճարի իջման գանգակատան աջ կողմը Ներսէս Ե. ի գերեզմանի մօտ երեքշաբթի, նոյեմբերի 6-ին փառահեղ շուքով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
ԹՈՐԳՈՄԵԱՆ ՏՈՀՄԻ
ՄԿՐՏԻՉ Ա.



Աղբիւրի և Տարազի աշխատակից

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

Գրականագէտ, կենցաղագիր, աշխարհիկ լեզւի ժշակող և տարածող, ուսուցիչ, օրիորդական դըպրոցների, թատրոնական բեմերի հիմնադիր, պարբեբական թերթերի աշխատակից վախճանուեց 70 տարեկան հասակում, ուրբաթ նոյեմբերի 23-ին 1907 թ. Բաղեայ քաղաքային հիւանդանոցում և ժարմինը նոյեմբերի 25-ին փոխադրուելով Թիֆլիս Վանքի Մայր Տաճարը, դեկտեմբերի 2-ին շուքով ամփոփուեց Նոյիվանքի գերեզմանատանը։

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

Պսակներով շուրջ բոլորած
Եկեղեցում դագաղ է դրած.
Այն դագաղի մէջ ննջողը
Պերճ Պոօշեանցն է, յայտնի գրողը։

—

Ինչքա՜վ է նա հանրածանօթ,
Ինչքա՜վ է նա հայ սրտին մօտ.
Ինչքա՜ն համար հայ աշխարհը
Անկեղծ ողբում է նրա մահը։

—

Հայ դպրութեան բազմավաստակ,
Քանքարաւոր, անխոնջ մշակ,
Իւր վէպերում, հայելու պէս,
Նա հայ կեանքն է բերում հանդէս։

—

Աբովեանին նա հարազատ
Աշակերտն էր ժիր, բազմաշխատ.
Իւր ուսուցչին հանճարաւոր
Հետևողն էր տաղանդաւոր։

—

Հայ դպրութեան պատմութեան մէջ
Գրաւել է նա փառաւոր էջ,
Եւ կը յիշուի միշտ յարգանքով
Նրա անունը, պսակած փառքով։

Գէորգ Բարխուդարեանց

Bullfinch



Հայկական ղեղագրեր XIII-րդ. դար. Ս. Էջմիած. Ազգ. Մատենադարան

ՊԷՐՁ ՊՈՕՇԵԱՆՑ

Հայրենիքիդ ծառ ու ծաղկունք,
Քար ու քաւափ, խոր ձորեր,
Անմահական անուշ ակունք,
Արագածի քաղցր հովեր,
Հինական չարն ու բարին,
Ուրախութիւն, դարդն ու ցաւ,
Թէ տուեցին քո հանճարին՝
Կարող վրձինդ շարժուեցաւ·
Եւ պատկերներ՝ չքնաղ սիրուն,
Կենդանացան՝ շունչ առած.
Նոքա միշտ Թարմ, ինչպէս զարուն,
Հոտ են բուրում հայրենեաց։

Յովհաննէս Յովհաննիսեանց.

Հայ գրական երկնքի ա-ժեծափայլուն աստղերից մեկն էլ ընկաւ՝ յետքից պայծառ զիծ թողնելով։

Զրկայ այլ ևս «Սօս և Վարդիթերի» «Կոտաճաղկի»,—«Հացի խնդրի» ոգեշունչ շարադրողը։

Անմահական գիրկը գնաց՝ բուն հայ ժողովրդի ուրախութեան երգիչը, վշտի լացողը. կոշտ ու կոպիտ արտաքինով ծածկւած հայ գեղջուկի՝ներքին՝ ազնիւ և չինչ հոգու տաղանդաւոր նկարագրողը. հայ օջախի մաքրութեան և ընտանեկան սրբութեան ջերմ չատագովը։

Թողեց այս անցաւոր աշխարհը՝ հայ օրիորդի կուսական, ամօթխած, բայց ջերմ, երկնային հրով վառւած սիրոյ պատկերացնողը. չբխօսկան, լուակեաց, հաւեստափայլ հարսի զգացմունքների թարգմանը. հայ կորիճների վեհանձնը, արիասիրտ, հայրենանուէրը, անձնազոհ, բայց միևնոյն ժամանակ հաւեստութեան իդէալ ներկայացնող, փափուկ սրտերի համուտ թափանցողը։

Գերեզման իջաւ՝ դարաւոր, թանձր խաւարի մէջ մնւած, բայց անդուլ ճակտի հալալ քրտինքով իր պարէնը վաստակող, ընութեան հարազատ զաւակ՝ հայ գիւղացու՝ հոգեկան աշխարհը լուսանկարչական ճշտութեամբ պատկերահանը. ամուսնու հետ հաւասար չափով լուծ քաշող, նախնեաց աւանդութիւններն հարազատութեամբ պահպանող, տոկուն, ժրաջան հայ գեղջկուհու սրտի խորքերից խօսողը։

Ծաչատուր Աբովեանին ընկերացաւ նրա հայրենասէր, մինչև ուղն ու ծուծը հայափիտ աշակերտը. «Վէրք Հայաստանի»-ն պաշտող, նրանով ոգևորւող և նոյն շաւղով ընթանալ ուխտող վիպասանը։

Իր անմոռաց գործակիցների գիրկը գնաց վաթսունական թւականների յայտնի դպրոցական – հասարակական

գործիչ Շանշեան, Մուրադեան, Պոշեան—վերջին մոհիկանը. մեր դպրոցական կեանքին նոր շունչ, նոր հոգի նոր մեթոդ ուղղ այդ երբորդութեան ամենագործունեայ անդամը։

Սահակ-Մեսրոպեան շարքը դասուեց հայ ժողովրդի քաղաքակրթութեան, հայ դպրոցական գործի սիրահարը. իւր ամբողջ կեանքը դպրոցին նուիրած, մանուկ սերնդի դաստիարակութեան համար ծանր աշխատանք կրած և մեծամեծ չանքեր թափած ուսուցիչը. հայկական բեմի, հայերէն ներկայացումներ յաջողեցնելու համար անխոնջ, անդուլ կերպով տքնողը։

«Գրիչ-քրիչի», «Համով-հոտովի» արտադրող տաղանդաւոր Սրուանձտեանի մօտ սլացաւ հայ աղգագրութեան աւենա առատ նիւթեր ուղղ, սուր դիտողութեան տէր և մանրազննին էանօդրաֆի եռանդուն հոգին։ Ապագայ սերունդներն անշուշտ արձաններ կը կանգնեն սօցեալական հոգեբանութեան համար անգնահատելի աղբիւր ներկայացնող երկերի հեղինակին։

Յաւիտենական հանգիստ, սիրելի քարեկամ, քո աճիւնին։

Խահակ Յարութիւնեան

ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՈՒՑ ՃՆՃՂՈՒԿ

(Հայոց վեհափառ Հայրիկի անտիպ նորագույն բանաստեղծութիւն)

Ք՚ուղ առաջին, զարձեալ կրկին
Տէր յաջողեց, ես ուխտ եկի
Հաչակաւոր վանք Սանահին։
Թէ ողջ լինէը բառակըկիտն
Տէր Օհաննէս Հիւնրեաբպէյենդեան
Սառւգաբանէը լմէ սա է հին։
Այո՛, հնացել է Սանահին
Բարոյապէս և նիւթապէս։
Ո՞ւր են այնչափ վաստակասէը,
Տքնող գրող վարդապետները...
Աւաղ, շիրիմք են մնացել։
Երբ կենդանի սուրբ տաճարներ
Երկնից կայան են փոխւել,
Ո՜հ, մնացեր են ամայի
Քարէ շինւած ձեռագործներ,
Հոյակապ հարտարարւեստ,
Հիանալի—զարմանալի,
Մեր Սանահնի պերճ հնութեանց
Այս է մնացել միայն յիշատակ։

Հազար ափսոս, զուցէ այն ևս
Անհետ լինի տակաւ տակաւ,
Թէ չհասնի ձեռք նախախնամ,
Որ նորոգէ և պահպանէ։
Կա՛ց դու, մի գար օր դժպատեհ,
Եւ վա՛յ աւուրն այն չարաբեր,
Երբ հնութիւնք մեր չքանան.
Ո՛հ, ով լինի վկայ յայնժամ,
Թէ էր և կայ Հայոց աշխարհ։
Եթէ մարդկանց լեզուք լռեն,
Մեր տաճարներ բոլոր քառնան.
Խաչաքարեր մահարձաններ
Լեզու լինին ու բարբառին։
Եւ ադաղակ հանեն յերկինս։
Տէր, դու լսիր և մի ջնջիր
Հայոց փառաց յիշատակներ։
Թողում ես աստ ողբական բան,
Ձնճղուկին սկսեմ բան։

Իմ իջևան էր մի խցիկ,
Ինպէս՝ ինչպէս գեղջուկ տնիկ,
Այլ ինձ համար քաղցր էր և դիւր,
Քան Վեհարան իմ փառաշուք։
Իմ խցիկիս առաստաղում
Բոյն էր դրել մի ճնճղուկ,
Գարուն էր, ապրիլ ամսում,
Ծեղճ ճնճղուկ, ՚տի նստէր թռուխս,
Հանէր ձագեր իւր սիրասուն։
Երբ լուսամուտն ես փակեցի,
Էլ չէր կարող մուտ-ել անել—
Անդադար ,գար ու նստէր
Լուսամուտին մօտ՝ ինձ ի դէմ,
Կացահարէր ապակի դուռն,
Թըկ-թըկ անէր, բան խօսում էր։
Թւէր թէ ասէր՝ «քաց որ մտնեմ,
Նստիմ ի թռուխս շինածս բնիկ,
Ասեն, գթած ես, ով Հայրիկ։
Բայց հալածես վիս իմ բունէս։
Ա՛խ, անցնում է անուշ գարուն,
Ես մնում եմ առանց ձագու»։

Ասի՝ «Ճնճղուկ ես հիւր եմ քեզ,
Չիս մի առներ դու անհանգիստ,
Այսօր եկի և վաղ կերթամ,
Չեմ դրաւեր բո բնակավայր.
Ես անցաւոր եմ, անցաւոր,
Դու սեփական տէր ես վ.անուց։
Դու հէր լծողուս մեծ տաճարներ,
Կամարներու բարձր տեղեր,
Եւ եկել ես բոյն ես դրել
Ցած ու անձուկ խրճիթի մէջ,
Ուր բնակին անթիւ մարդիկ,
Դու լեռաւոր ես, ով լռչնիկ»։
Ասաց ճնճղուկ՝—մենք ընտանի
Մարդամօտ եմք ինչպէս դրացի,
Մեր ապաստան են լաւ մարդիկ,
Եւ մեծ լռչուն՝ պճած արագիլ,
Որ շինում է բոյն բարձրադիր։
Ճնճղուկներս երթամք վստահ,
Ձարուհնք բունին չորս բոլորտիք,
Ինչպէս ասում է հայր Դաւիթ,
Թէ «արագիլի բոյն բարձրաշէն
Ապաւէն է ճնճղուկին,
Որ պահպանէ չար բազէէն»։
Երբեմն երթայ մեր արագիլ,
Մեր թշնամի օձն սպանէ,
Ճէլան-ճէլան կտցէն ի կախ
Առնէ բերէ մինչև ի բոյն,
Սուր դանակ է իւր կտուց,
Կտոր-կտոր առնէ իւր որս.
Սեղան կազմէ պերթ տանտիկին,
Բաժին բաժին տայ ձագերուն.
Մեզ չէ ինչ փոյթ, չունիմք բաժին,
Մենք հատակեր ճգնաւոր եմք։
Ասէք, ինչու լծողուր այնչափ
Այդ բարձրաշէն մեծ տաճարներ,
Ուր բոյն դնել ապահով է՝
Քան այսպիսի ցածուն տեղեր։
Փոքրիկ-փոքրիկ ճնճղուկներուս
Փոքրիկ խցեր են վայելուչ,

Չեմք արժանի մենք տաճարին.
Մեք չքոտի համարւած եմք,
Քրիստոս մեր գին ժժան է դրեր.
Մեր հինգ ձագեր խիստ ախրագին
Երկու դանկի վաճառում են։
Տաճարներու արժանաւորը
Այլ երաժիշտ թռչուններն են,
Մեր ճնճղկայ աղօթարան
Ծառոց ճօճան ճղերն են,
Թէ իրիկուն թէ առաւօտ
Ձլւետելով աղօթում ենք։
Մեր շարական միաձայն է.
Մեզ չէ տւեալ ի բնութենէ
Փոփոխաձայն դեղգեղանքներ։
Իսկ տաճարին աղօթաւորք
Այն տիրացուքն են համերգողք.
Սարեակ, ծիծառք և ազանիք,
Քաղցրախօսիկ և մրմնջողք,
Զայնակցեալ վառաբանեն
Հոգացող Հայր մեր երկնաւոր,
Որ տայ մեզ օր ըստ օրէ
Կուտ և պարէն առատօրէն։
Է՜հ, դու Հայրիկ, հէրիք մնաս,
Դու տեսնում ես վանքն աղքատ է,
Թէ հիւր ես դու, բաւ է այսչափ,
Գումի արա ինձ, բայց իմ դռնակ,
Գամ ես ազատ, մտնեմ բունիկս,
Կրկին հանդիստ նստեմ ի թուխս։
Ո՜հ, սառած են ածած ձւերս,
Նոր՝ տի ջեռնուն, ելնին ձագերս»։
Ասի՝ «ճնճղուկ, տես կերթամ,
Ընորհակալ եմ, դու ողջ մնաս.
Սրի նստիր քո տուն քո բոյն,
Վարձ մի ուզիր Աստուած կուտայ,
Զրկանք արի քեզ, ով ճնճղուկ,
Մի բողոքիր առ դատաւորդ,
Բան մի հանիր ի դատաստան։
Չը գիտեմ թէ ինչ փոխարինեմ,
Ասպնջական եղիր դու ինձ։

Թէ սիրես, թէ ախորժես,
Զրկիլ տանեմ էջմիածին.
Վեհարանիս մի անկիւնիկ
Քեզ վայելուչ շինեմ բունիկ,
Կուտան առատ է, միշտ վայելէ,
Եւ դու լինիս երջանիկ»։
—«Չէ, չեմ թողուր ես Հայրենիք,
Անտառ հովիտ ծաղկազարդիկ,
Իմ հովասուն ազատ վայրեր,
Գամ քո ջերմին օտար աշխարհ
Եւ թալկանամ ոտնահար։
Ուր ասեն թէ կան բազէները,
Սուր ճանկերով պիս բզկտեն։
Ի Սանահին է խանձարուրս,
Ապրիմ, մեռնիմ հայրենի տուն,
Բոյւ է բունիկս իմ սիրական,
Թող քեզ մնայ քո Վեհարան։
Թէ Վեհարանդ է շէն, պայծառ.
Ընդէր թողուս շրջիս աստանդ,
Ասեն անունդ է քո արծիւ,
Բայց դու սիրես աւերակները,
Մինչէ բու ես աւերակի,
Որ չիս սիրում շէն-շէն տեղեր»։
—«Է՛, չը պիտես դու իմ վիճակ,
Թէ Վարագայ սարի արծիւ,
Ո՛հ, ձնճղուկ է գարձեր,
Եւ ձնճղուկ միայն ի տանիս,
Դորա համար խոնարհեր է,
Ձնճղուկիդ հետ խօսում է։
Ես սիրում եմ աւերակները,
Դու էլ սիրէ քո շէն բունիկդ.
Մի հեռանար Սանահինէն,
Թէ ապրես և թէ մեռնես,
Միշտ երջանիկ ես դու, պիտիս,
Գերեզմանդ մօտ է սուրբերուն,
Աւ հովանեաւ տաճարներուն,
Քո յիշատակ ես չեմ մոռնար։
Թրկ-թրկ կացիկդ ինձ խօսնակ էր,
Ձիս թեւաղրնց բան ստեղծել,

Զոր նւիրեմ բոլոր գալմիդ,
Որ ձնծղուկ անուն կոչեն»։
Է՛, դուք, մարդիկ հայրենափոխ,
Ձնծղուկէն առէք յորդոր։
Ուր ծներ էք, անդ մեռէք դուք,
Ձեր դերեզման հայրենի հող։

ՅԱԽԵԼԻԱԾ

Մինչև լրացաւ բան ձնծղկին,
Երկնուց ամպեր որոտացին.
Կուժ-կուժ թափէր առատ անձրև,
Խցիս տանիքն էր ծակ ու ծակ։
Շատ անձրև վերէն ի վայր
Ասեն, չայրիկ, բո տեղ փոխենք։
Ասի, կ՚այ տեղ, որ չի կաթեր,
Թողէք լաւ է ճեամ խցիկս։
Ջրհեղեղի անձրև չէ այս,
Ինչ որ երկնուց թափի դեռին,
Շնորհ և պարգև է երկնային.
Անձրև կարկուտ շատ եմ տեսել,
Շարքաշ լինել սովոր եմ ես։
Թողավրդին ձայն ադադակ
Լսեց երկինք, անձրև տուաւ.
Օրհնեալ Աստուած, որ տայ անձրև
Մերթ ի կանուխ, մերթ անագան,
Նա պիտէ երբ է պիտոյ,
Չի մոռնար հայ հանապազորդ,
Թէ աղօթեմք մեք հաւատով։—

1901 Ապրիլ ի Սահահին.

ՀՈՎՀ. ՀՈՎՍԻԿ

ՀՐԱՅՐԸ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՇԻՐՄԱՄ

ԱՐԾՒՒԿ

Ձմեռ դեռ թոյլ էր. նոր էին թևերն ամրացել։ Բայց և այնպէս նա գլուխը բարձր էր բռնում, հայեացքը լուրջ էր և շարժուածքը ծանր։

Նա անշարժ նստած էր մեծ երկաթեայ վանդակի մէջ, ամուր բռնած իր կեռ ճիրաններով հաստ կաղնեայ ձողիկը. նա մտածում էր. իսկ թէ ինչի մասին, նա ինքն էլ չը գիտէր։

Նրան թւում էր, թէ այն աշխարհը, որ նա տեսնում է վանդակի նեղ ճաղերից, իսկական աշխարհը չէ, որ նրանից այն կողմ կայ մի ուրիշ էլ առաւել յաւ աշխարհ, որտեղ ամեն ինչ այլ ընթացքով է ընթանում, որտեղ աւելի ազատութիւն և լոյս կայ...

Մինչէ նրան տրւած են լայն թևեր և սրտաւս աչեր միայն այս նեղ վանդակում ընդմիշտ բանտարկւելու համար։ Ո՛չ, նրա համար մի այլ աշխարհ և մի նոր կեանք կայ...

Բայց թէ իսկապէս դա այդպէս էր թէ ոչ, նա չէր հասկանում, վճռել չէր կարողանում։ Այն օրից ի վեր ինչ ինքն իրան յիշում է, շուրջը ոչինչ չի փոխւել—էլի այն նեղ վանդակն է, էլի նոյն երկաթեայ ճաղերն են, որ շրջապատում են նրան, էլի նոյն կաղնեայ ձողիկն իր երկար ճիրանաւոր ոտքի տակ... պատուհանից երեում է էլի նախկին փողոցն իւր բարձր տներով, որոնք ծածկում են թէ երկինքը և թէ արեգակը... Ճշմարիտ է այն, որ երկիրն առաջ համարեա մոխրագոյն էր, քամին անդադար փչում էր, ցուրտ անձրևը ծեծում էր պատուհանները դիշեր-ցերեկ, իսկ այժմ ամեն ինչ ճերմակել էր՝ թէ փողոցը և թէ տների կտուրները. պատուհանը զարդարւած էր պանդրատեր նկարներով երկնքի երև-

սին սարերի նման շողում են սպիտակ ամպերը, երբեմն էլ յանկարծակի անզուսպ կերպով թափւում են սպիտակ ալեամազեր, որոնցից մի քանիսը թռչկոտում են թիթեռնիկների նման։

Սակայն Արծւիկի շուրջն ամեն ինչ նոյնն էր, նոյն մարդիկն էին, որ մտնում էին նրա սենեակը՝—փոքրահասակ ակնոցաւոր ծերունին և ուրախ ու աղմկասէր մանուկները։ Մանուկներն ամեն անգամ ծերունուց առաջ էին դուրս գալիս և խինդ ու ծիծաղով մօտենում վանդակին նայելու, թէ ինչ է անում իրենց Արծւիկը նրանք միշտ հետաքրքրութեամբ դիտում էին, թէ ինչպէս ծերունին փոխում է վանդակի միջի ջուրը և կամ ձգում նրա առաջ մսի վարդագոյն կտորները։

Արծւիկը ընտելացել էր արդէն փոքրահասակ ծերունուն, ուրախ մանուկներին. նա մեծ բաւականութեամբ էր կտրատում միսը և մինչև անգամ ժամանակ առ ժամանակ թոյլ էլ էր տալիս ամենափոքրիկ աղջկան փոքրիկ ձեռներովը խաղալ իր փրփրանման սպիտակ թևերի հետ և չէր էլ բարկանում նրա վրայ, երբ հանգստութիւնն էր խանգարում։

Այդ մարդիկը նրան հոգում էին, կերակրում և տարօրինակ էր այն, որ էլի նրան թւում էր, թէ նրանք իրան խորթ են, ինչպէս և իր շրջապատի ամեն ինչը, որ չը կայ նրա համար ոչինչ լաւ ու հարազատ և որ նա ոչոքին չը պիտի սիրէ ..

Ժամանակն անցնում էր Արծւիկը մեծանում էր, նրա թևերն ամրապնդւում էին, կարճանման կտուցը ծռւում, սրանում և ամրանում էր, ինչպէս պողպատ, սուր ճիրանները չմեծացել էին և էլ առաւել ուժգնութեամբ բռնում էին կաղնեայ ձողիկը։

Եւ ահա մի անգամ Արծւիկը նստած երկար մտածում էր, երբ յանկարծ ցնցւեց, յուզւեց, աչքերը սկսեցին փայլել, թևերը դողացին, կարծես թէ նա կամենում էր թռչել և ծանր երկաթէ վանդակը տատանւեց։ Նա կամենում էր կանչել, կանչել հպարտ և ինքնիշխան կերպով։ Սակայն շուտով չթևերը, կտրւածի նման, վայր ընկան, ցնցումն անցաւ, նա կրկին յենւեց ձողիկին և նստեց վանդակի մէջ։

Այդ օրից ի վեր Արծւիկը տխուր էր։ Եւ ինչքան ուժեղ և ամուր էր զգում իրան, այնքան աւելի խլոխատանում և ցնցւում էր, ինչքան էլ աչքերը բարկութեան հրով փայլում էին և այնքան էլ յաճախ տատանւում էր վանդակը նրա լայն թևերի անհանդիստ շարժումներից։

Նա այժմ չարամտութեամբ էր նայում իրան մօտեցող ծերունուն և մանուկներին։ Մի անգամ, երբ ըստ սովորութեան փոքրիկ

աղջիկը մօտեցաւ վանդակին և ճաղերի արանքից վանդակը մտցրեց ձեռքը, Արծւիկը զուժանութեամբ յարձակուեց նրա վրայ։ Մանուկը լեզուապատառ մի կողմ փախաւ։

Արծւիկը ինքն էլ չէր կարողանում հաշիւ տալ իրան, թէ ինչ պատահեց իր հետ, թէ նա ինչու է այդպէս արհամարհում այն փոքրիկ աղջկան, որ իրան տեսնելով միշտ ուրախանում էր և որ ոչ մի վատութիւն չէր արել։

Այո, այժմ նրան ատելի էր թէ վանդակը, թէ փողոցը, թէ մարդիկ, որ նիւթում էին նրան և նրանք, որոնք նրան շրջապատում էին և հոգս տանում...

Նա էլի նստեց ձողիկի վրայ և տխրադէմ սկսեց նայել պատուհանից։ Նա տեսաւ էլի նոյն չարագուշակ փողոցը։ Միայն այժմ փողոցից վազում էին արագընթաց, պղտոր վտակներ. ձիւնը հալչում էր, թռչունները սկսել էին կենդանութեան նշոյլները ցոյց տալ։ Այո, ամեն ինչ շնչում էր կենդանութեամբ, ամեն ինչ պայծառ էր, իսկ արեգակն երբեմն-երբեմն քնքուշութեամբ փաղաքշում էր Արծւիկի վտակը իր տաք ճառագայթներով։

Բայց որքան որ թափանցիկ և մաքուր էր դառնում օդը, որքան ատելի խոլն էր բացւում կապուտակ երկինքը, որքան ատելի ուրախ էր հնչեցնում իր երգը թռչունների խումբը, այնքան ատելի և ատելի տխրութեամբ նայում էր Արծւիկը պատուհանից։ Իսկ երբ երկիրը ծածկուեց առաջին կանաչով, երբ բայ պատուհանի միջից նրա սենեակը թափանցեց գարունը ծառատունկներից արձակուած հոտերով, աղբիւրների լոլոջինով, արեգակի կուրացնող ճառագայթներով, Արծւին էլ առաւել տխրեց։ Նա այլևս չէր մտնում վարդագոյն մսին և մաքուղջ օրերով նստած էր ձողիկի վրայ անշարժ, խրոխտ, տխուր... Այդպիսի մի պրուիթեան մէջ նա կամենում էր մեռնել, որպէսզի չը տեսնի այլևս այդ ատելի աշխարհը և չը տանջւէ. նրան թւում էր, թէ նա արդէն իսկ մեռնում է։ Եւ իսկապէս նրա թևերը թուլացան և արձակուեցան, հպարտ պլուխը ծռուեց, աչքերը մարեցան, ճիրանները ևս թուլացան և էլ անկարող էին պինդ բռնել կաղնեայ ձողիկը։ Նա դուրս այդ րոպէին ընկնէը, եթէ յանկարծ չը լսէր իր պատուհանի տակ մի աշխոյժ ճուողիւն։ Արծւիկը բացեց իր աչերը և տեսաւ պատուհանի եզրին մի փոքրիկ սպիտակաթիրա թռչուն, որի նմանը նա մինչև այդ չէր տեսել։

Դա գարնան առաջին ծիծեռնակն էր։

Ծիծեռնակը նոյնպէս զարմանքով էր նայում Արծւիկին և նրան թւում էր, թէ ինքն իսկապէս ծանօթ է այս թռչնի հետ՝ կարմրանման կտուցով, սուր կեռ ճիրանով և լայն թևերով... այո, նա

տեսել է այդպիսի թռչուններ, սակայն այստեղից հեռու, շատ հեռու, այն երկրներում, որտեղից նա անցել է, շտապելով դէպի սիրեցեալ հայրենիքը։

Եւ յանկարծ լսեց ծիծեռնակը մի շշուկ...

—Ես մեռնում եմ, որովհետեւ տխուր եմ... Ասա ինձ, ախր ես /նչի՞ այսպէս տխուր եմ...

Ծիծեռնակը խղճաց այդ մեծ, ուժեղ թռչնին, որ ծանր վշտի տակ ճնշւում էր և սկսեց երգել...

—Ես չը գիտեմ, թէ ինչի ես դու տխուր, բայց ես այսօր այնքան շատ թռել և այնպէս յոգնած եմ, որ կարիք եմ զգում հանդստանալու, նախ քան աշխատանքի ձեռք զարնելս։ Եթէ կամենում ես քեզ կը պատմեմ, թէ որտեղից եմ թռել և ինչ եմ տեսել։ Դա, գուցէ, քեզ կը զբաղեցնէ և վշտերդ առ ժամանակ կը փարատէ։

—Ուրեմն բայի այս առելի բաղաքից կայ և մի այլ աշխարհ, հարցրեց աշխուժութեամբ Արծուիկը։

—Ո՜հ, այո՛ և ինչպիսի աշխարհ... հրսլիսի մեծ, բազմազան, գեղեցիկ աշխարհ։ Մեր քաղաքը մի փոքրիկ, հազիւ նշմարելի կէտն է այս աշխարհում։ Ես անցել եմ շատ մեծ տարածութիւն, բայց կարծում եմ, որ այդ տարածութիւնը ոչինչ է աշխարհի համեմատութեամբ... ես կարծում եմ, որ աշխարհն անսահման է...

Ես եկայ այստեղ հարաւից, այն հրաշալի երկրներից, որտեղ մշտական կանաչն է տիրում, որտեղ խստաշունչ ձմեռը չի ծածկում իր սպիտակ, փափուկ ծածկոցով երկիրը, որպէսզի տաքացնէ, ծառերն ու լճերը երբէք չէն ծածկւում քարի նման պինդ սառոյցներով։

Ես թռայ լայն, միշտ ադմկող ու փրփրացող ծովերի վրայից, որտեղ չի երեւում եղերքները, որտեղ միայն ջուրն է, իսկ ջրի վրայ կապուտակ երկնակամարը։

...Ապա ես տեսայ մի ուրիշ, չոր ծով, չոր երերուող աւիրնեւով, հրաշէկ, դեղին աւազեայ ծով, որտեղ չըկայ կանաչի մի կէտ, որովհետեւ այնտեղ չի երեւում ջրի մի կաթիլ, որտեղ սպիտակին են տալիս միայն քաղցից ու ծարաւից սպանուած մարդկանց ու ուղտերի ոսկորները՝—տխուր կարաւանի տխրալից ճանապրդները։

...Ես անցայ նաև ճոխ, լայն դետերի արծաթափայլ ժապաւէններով ոլորուած կանաչ հարթութիւնների վրայից, որոնց վրայ ցրուած են գիւղեր ու քաղաքներ, եկեղեցիների բարձր, հաստատուն պարիսպները՝—այնտեղ ուրիշ մարդիկ են, ուրիշ լեզու և ուրիշ սովորութիւններ։

...Ես անցայ նաև բարձր սարերի մօտից և ինչպիսի բարձր։

Նրանց կատարները գլխարկի նման ծածկած են չը հալւող, յաւիտենական ձիւնով և սառոյցով, կարծես, արծաթից կերտած լինին։ Նրանցից վար կծկւում են ծովի նման սպիտակ ամպերը, իսկ նրանցից բարձր մշտական պարզ, կապոյտ և անսահման երկնակամարն է, ոսկեզոյն, բայց պաղ արեգակով... Նրանց կատարը չի բարձրացել ոչ մի մարդ, փայլուն, սառցեայ կատարներին ոտք չի դրել մարդը, այնտեղ հասնել անկարող են գազանները և միայն արքայ-արծիւները են, որ շնորհիւ իրանց ուժեղ, լայն թևերի հասնում են...

—Ինչպիսի՛ արծիւներ, հարցրեց յանկարծ Արծւիկը։

Նա վաղուց է ինչ արդէն յուզւած էր, սիրտը մարել էր, իսկ այժմ նա զգում էր, որ շուտով մի նորութիւն կիմանայ, որ նրա համար անսահման ուրախութիւն կը լինի...

—Մի՞թէ դու չես ճանաչում արծիւներին, հարցրեց ծիծեռնակը. իսկ ես կարծում էի, թէ դու ես Արծիւ ես։ Գոնէ շատ ես նման դու նրանց։ Բայց միայն արծիւները քաղաքներում չեն ապրում, վանդակներում բանտարկւած չեն լինում։ Ո՛չ ոչ... նրանք վիթխարի, հրաշալի թռչուններ են։ Ճշմարիտ է այն, որ նրանք գեղեցիկ չեն, նրանց փետուրներն այնպէս փայլուն չեն, ինչպէս թութակներինը, բայց և՛ այնպէս մարդիկ նրանց անւանում են թռչունների թագաւոր։ Եւ դա իրաւացի է։ Այո՛, Արծիւները հրաշալի թռչուններ են, հրաշալի և խրոխտ։ Նրանք ապրում են այն բարձր լեռների վրայ, որտեղից ես թռել եմ և նրանց մասին քեզ պատմեցի։ Նրանք իրանց բները շինում են անմերձենալի ժայռերի և ոսկալի ու անյատակ անդունդների վրայ։ Նրանք ոչ որից չեն վախենում և վերջապէս ումից պէտք է վախենան։ Նրանց մօտ չի հասնում ոչ որսորդի զնդակը և ոչ էլ դիշատիչ գազանների ճանկերը, նրանք սաւառնում են անչափ բարձրութիւնների վրայ, դիտելով այնտեղից որսերն իրանց սրատես աչքերով, նրանց դլխին միայն արեգակն է և կապուտակ երկնակամարը, նրանց տակը՝—ամբողջ տիեզերքը ծովերով, հարթութիւններով ու քաղաքներով հանդերձ, իսկ շուրջը՝ անսահման ընդարձակութիւնը...

Սակայն ինչ պատահեց քեզ, կանգնեց յանկարծ ծիծեռնակը...

Իրօք Արծւիկի հետ մի ինչ որ անսովոր բան էր կատարւում։ Նա այդ րոպէին իր մէջ այնպիսի մի ոյժ զգաց, որպիսին երբէք չէր զգացել... Նա գլուխն էլի խրոխտաբար վեր բարձրացրեց, աչքերը փայլեցին, ճիրանները խոր մխեցին հաստ կաղնեայ ցողիկի մէջ, թևերն արձակւեցին, դողդողացին —և յանկարծ նա կանչ բարձրացրեց, վայրենի և խնդագին կանչ...

Այն, այդ ժամանակ միայն ծիծեռնակը ճանաչից այդ հրաշալի թռչնին...

Արծուիկն այժմ միայն իմացաւ, թէ ով է ինքը, ինչի էր այսքան ժամանակ սխուր և թէ ինչ էր կամենում։ Այժմ արդէն ամէն ինչի վերջն է։ Այժմ հարկաւոր է թռչել, սաւառնել, որքան կարելի է շուտ, արագ այնտեղ, այն հրաշալի, հարապատ, արծաթափայլ ջազաթով սարերը...

...Բայց նա վանդակումն է...

Եւ ահա Արծուիկը սկսեց ճիչ արձակել, երկաթեայ ճաղերին զարնուել, մեծ ոյժով կոտր-կոտր անել իր կտուցով ճանկել սուր ճիրաններով...

Երկար, ուժգնութեամբ նա կռւում էր—ապա խաղաղուեց և ընկաւ վանդակի յատակի վրայ... Արծուիկը մեռնում էր և նրան թւում էր, թէ նա իր արագաթռիչ թեւերով սաւառնում է դէպի վեր--վեր և ազատութեամբ կուլ է տալիս արեգակի ոսկեզոյն ճառագայթները... Նրա տակը՝ հրաշալի, բազմազան աշխարհն է, վերևը անսահման, կապուտակ երկնակամարը, իսկ շուրջը՝ անսահմանի ընդարձակութիւնը, հարապատ արծաթեայ գլխարկ հագած սարերը... Նա տեսաւ այդ ամենը, տեսաւ աչքը փակ և այդպէս էլ հանգաւ, մեռաւ...

Նրա անհանգիստ սիրտն էլ չէր բաբախում, երկաթէ վանդակն էլ չէր յուզում—նա ազատ սաւառնում էր կապուտակ երկնակամարում...

* * *

—Պապիկ, պապիկ, Արծուիկը մեռաւ, լուեց յանկարծ փոքրիկ աղջկայ սխուր ձայնը, որ այդ ժամանակ վանդակին էր մօտեցել։

—Այո, սիրելիս, նա զոռով էր և չը կարողացաւ տանել գերութիւնը... Այժմ նա ազատ է, իսկ վանդակը պարապ կը մնայ... Նա, սիրելիս, Արծիւ էր ծնուել, արծուի մահուամբ էլ մեռաւ... Ի՞նչ անենք, կը նստեցնենք դեղին սարեակ, կարմրակատար և կամ թէ դեղձանիկ... Ինչ ես կամենում... Նրանք կը մեծանան և կը երգեն վանդակի մէջ, մի տխրիր, սիրելիս։

—Պապիկ, դեղձանիկ, դեղձանիկը լաւն է։

—Դէհ, շատ լաւ... աննման է... Նա կըսկսէ ուրախ երգել և մեր սիրտն էլ կարնան համեմատ կը հրճւի...

—Այդպէս, սիրելիս, դեղին, ոսկեզոյն դեղձանիկ։

Գր. Զուլալ

Հայոց Հայրիկը դագաղում

ՀԱՅՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Աննկուն հոգով դու շալակեցիր
Հայութեան խաչը՝ ծանր, անգուման.
Դէպի Golgotha՝յ բարձր, անսածիր,
Դու վեր սլացար սէգ արծւի նման։
Թռիչքդ ապառ, թռիչքդ խիզախ
Ու դու չիմացար ո՛չ սարսափ, ո՛չ վախ.
Վասպուրականի Արծի՛ւ սիպտակած,
Ամեն ինչ յաղեց թռչիքդ անսանձ։
Եւ հասար այնտեղ... բայց բաղդը խլեց,
Տարաւ քեզ հեռո՛ւ, մի անյայտ աշխարհ,
Եւ քո աստղն էլ թուաւ ու ծածկուեց,
Մեր յուսոյ աստղը՝ սիրուն լուսաւառ։
Նայում ենք վերև՝ երկինքն մթնած,
Նրան չի շարժում խեղճի ոսկ ու լայ.
Նայում ենք չորս կողմ՝ խաւխիծ ու տանջանք,

Ցաւագար դէմքեր՝ անժպիտ, անկեանք։
Եւ մենք անհովիւ գառների նման
Սար-ձոր ենք ընկել՝ անաէր, անպաշտպան.
Այս մութ պիշերին յոգնած ու ջարդուած
Քայլում ենք առաջ՝ հեռուն սեամած։
Մեր թարմ վէրքերից արիւն է հոսում,
Հոսում է, անսիրտ ժայրերին քսւում.
Մենք խելակորոյս մղւում ենք առաջ,
Ոչ ոք չէ լսում մեր լաց, մեր հառաչ։
Օ՜, անաէրունչ հօտ՝ խեղճ, հալածական,
Քո հովիւն այսօր մտաւ վերեկման.
Ողբա՛ ու թափիր առատ արտասուք,
Հայրիկը գնաց, թողեց սև ու սուգ։
Հայրիկը գնաց... և հազար-հազար
Խեղճեր ու որբեր թողեց մերկ, անճար
Նոյա յոյսերն էլ թաղւեցան այսօր.
Ողբա՛, օ՜, ողբա՛, ո՛վ հօտ սպաւար...

Ց. Պետրոսեանց

ԸՂՁԱՆՔ ԽԱՉԻՆ

(Յաւէտ ողբացեալ Հայրիկին)

Թէ մեղքն
Եւ մեզի
Հոգւոյս
Անլոյս,
Քեզմով
Դարով
Կեանք, սէր,
Յոյսեր...:

Սրտիս Այլ լայք
Թէ ցից Ու ոլայք
Բեհեղն Մ'ես քաջ,
Եւ դեռ Ո՛վ խաչ

Ծո, տուր—վեհասուր Թէ քոյրն Թէ չանիմ—երկաթ
Հոգւոյս—Առ յոյս, Ու թոյլը Զաչին—Անդէն,
Կը թռա—եմ մօտ՝ Ծաղկին Իզձերս—Ադեր
Զիրմին—Յոտին...: Խօսին, Բաւ չին—Իրեն

Որ չիմ Հոգիս
Մը ժպիտ Ամեն
Բոյրմ՝ ալ Հեքիս
Սէր վար

Աչխարհ
Թող յար
Բերկրի
Ինծի,
Կամ՝ ծոցիս
Ու ծոցիս
«Վրէժ, քէն»
Մոնչեն,
Դու չես
Յոյսիս,
Ցաւ, խաչ,
Յաւաչ,
Ուր՝ սին՝
Դադրին
Դժոխքն
Ու հոգ...
Եղիր
Զաղիր
Ինձ վէրք
Մը սէգ՝
Ես քեզ—Սրտէս
Կարմիր—Մամիլ

Դու լոց Եւ սուգ՝
Կամ քոց Արցունք
Եղիր Լլամ՝
Հրաւիր Մրմամ.

Այլ մի Մինչև
Բերեր Որ թէև
Ջիրմի Չի տաս
Ցաւեր Ինձ բաց

Ձախրել — Սնոտ — Երկինն — Յոյսին։
Արցունք

Մ Ի Ա Ն Զ Ն Ո Ւ Հ Ի

Հայրիկեան Թա՛զարան ս. Էջմիածնում

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ

Հայրիկ իր եկած առաջին տարին Ջրօրհնէնքի հանդէս ինքը կատարեց և շատ սրտահուզ, ոգևորւած քարոզ խօսեց։ Տաճարում մեծ բազմութիւն կար և շատ եկեղեցիներ, օրը ցուրտ էր և մեծ ձիւն էր եկած։ Հանդէսից յետոյ միաբանները և ահագին բազմութիւնը խոնւեցին դէպի տաճարի ղևխաւոր դուռը, որ Հայրիկին հանդիպեն։ Բայց նա նկատելով, որ իրեն նայող չը կայ, յարմար վայրկենին, մենակ սիւնի հետևն անցաւ ու վանքի կողքի դռնով ելաւ բազմութիւնը տեսաւ. որ Հայրիկ իրենց հետից անցել է և մտնում է վեհարանի դարբասով, ցնծալից խնդաց և կեցցէ որոտաց։

— Մի առաւօտ չայի վրայ Հայրիկին պեկուցում են անում թէ այս գիշեր Ծորէն էֆենդուն խուզարկել են և իրեն էլ տարել են Թիֆլիս Մեհեխի բերդը. Հայրիկ ժպտալով ու պարծենալով ասում է, հա, Հայրիկ այդպիսի բաները շատ է տեսել։

— Տաքիև նկատելով թէ ինչպէս հետևորդները և հիւրերը կը խմեն և վայելում են ընտիր խորտիկները՝ ասաց, կը նախանձեմ ձեր ախորժակին, ես այլևս չեմ կարող ուտել այդ համադամ խորտիկները։

— Սուրբի Շուշանի գիւղում նկատելով տեղական քահանայի վերին աստիճանի սրտաշարժ և ջերմեռանդ ընդունելութիւնը, վանդի նրա տանն էր իջած Հայրիկը, ասաց քահանային, քո տուն ինձ շատ դուր հկաւ, թոյլ կը տաս մի գիշեր էլ մնամ այստեղ։ Քահանան ուրախութիւնից գրեթէ արտասւած փարեց Հայրիկի ծնկները և աղաչեց,

որ այդ շնորհն անէ իրեն։ Եւ Հայրիկը մնաց այդտեղ երկրորդ գիշերն ևս։ Մեկնելիս ասաց հիւրասէրը, բարեպաշտ քահանային, դուռ և սիրուհին լինէ հիւր եկէք Էջմիածին։ Մի երկու ամսից յետոյ Շադաթի, այդ քահանան վերցնում է մեղր, իւղ, պանիր և առանց սիրուհու գնում է Էջմիածին Հայրիկի մօտ։ Հայրիկը շատ սիրով, ուրախութեամբ ընդունում է նրան, հրաժայում է վեհարանում կերակրեն, պըտտեցնեն, ամեն բան ցոյց տան, բացատրեն, յետոյ տալիս է նրան Մակար կաթուղիկոսի խառա փիլոնը, ոսկեզօծ լանջախաչ, վերարկուներ և դրամ ու մի շաբթից յետոյ ճանապարհ դնում։

—Հայրիկը գալով Վայոց ձորի Ղուշչի-Բլակ գիւղը, նկատում է, որ քիչ մարդ իրեն դիմաւորեց. ամենքն էլ իրենց անասունների հետ անտարբեր հանգերը կերթան իրենց բանին։ Երեկոյեան իր իջևանած տան բակում հաւաքւած գիւղացոց ասում է. օրհնւածներ, հազար տարին մի անգամ գուցէ չը պատահի, որ ձեր գիւղը կաթուղիկոս մտնէ, այսօր ես եկել եմ ձեզ տեսնել, դուք մի մի էշ առաջներդ արած բիզ տալով կերթաք ձեր գործին, ինձ այստեղ պատրաստ թողած։

—Արցախի ճանապարհորդութիւնից վերադարձին, հին Նախջևանին 20 վերստ մնացած, մի դաշտավայրում Հայրիկին դիմաւորեց շրջակայ հայ գիւղերի ամեն սեռի և հասակի խայտածամուկ մեծ բազմութիւն։ Ամենքը ծունկ խոնարհած չերմեռանդաբար խնդրում էին Հայրիկի օրհնութիւնը, նա սրտայուզւած բաւական երկար խօսեց և իմիջի այլոց ասաց, մինչև հիմա ժողովուրդ մէկ կը լսէր՝ կաթուղիկոս ընտրւեց, մէկ կը լսէր՝ կաթուղիկոս մեռաւ, Բայց Հայրիկը, կաթուղիկոս լինելով, ցանկացաւ ժողովրդին տեսնել, ժողովուրդն էլ իրեն տեսնի և փոխադարձ ուրախակից վշտակից լինեն. այսօր իմ փափագ լցւած է, որ կը տեսնեմ այս հոծ բազմութիւն ինձ շրջապատած, շատ սփոփանք և ոգեւորութիւն կը զգամ, Հայրիկի կեանք՝ ժողովրդի կեանքն է, ապա խրատեց և օրհնեց մխիթարւած ժողովրդին։

—Դիլիջան շատ փառահեղ ընդունելութիւն եղաւ Հայրիկին, գիշերը ժամը 11-ին եկաւ պատշգամբը, որ հազարաւոր ժողովրդին արձակէ հանգստանալու. նա ասաց, դուք ցանկացել էք Հայրիկին տեսնելու, Հայրիկն էլ շատ փափագել է ձեզ տեսնելու, հիմա ճրագների լուսով ձեր դէմ-

քեր՝ ոմանցը լուսաւոր կերևի, ոմանցը մութ, գնացէք հանգստացէք, առաւօտ ձեզ ամենուդ մէկիկ-մէկիկ պիտի տեսնամ։

—Սունիքի Ուզ գիւղում, երբ շատ «կեցցէ» կը կանչէին, Հայրիկն ասաց, ճշմարիտն ասեմ, ձեր կեցցէներէն իմ ականջներս բաւական խլացել են։

—Օդեսայում մի հայ սարկաւագ խիստ երկար մազերով Հայրիկին ներկայացած ժամանակ, ասում է սարկաւագին, Ծօ, դու յոյնի տէրտէր ես։ Սարկաւագը այնտեղից ելնելով, անմիջապէս մազերը կտրտել է տալիս։

—Հին Նախիջևանից վերադարձին՝ Հայրիկ ճանապարհն ծռեց և մտաւ Խոր Վիրապ, ուր կանխորէն իմած տրւած չէր նրա գալը, ձիուց իջնելով, տեսաւ իրեն դիմաւորող Ներսէս եպիսկոպոսին, ասաց. քեզ ով իմաց տւաւ իմ գալը. սատանաները իմաց տւին։

(*Կը շարունակւի*)

Ժողովեց Ն. Վ. Տ.-Ա ւետիքեան



ՉՕՐԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ

(սկիզբը ԱՂԲԻՒՐ № 10)

ԳԻՇԵՐԻԱՆ ԱՆՑՔԸ

Մեր քանակը լուռ ու հանդարտ ընթանում էր դէպի առաջ՝ անցնելով մերթ հարթ դաշտավայրերով և մերթ լանջերով ու կիրճերով։ Վահունիկն ագահաբար զննում էր իր սիրելի հայրենիքի տեսարանները և իր սրտում մի դառն ատելութիւն էր սննդում դէպի այն անգութ թշնամին, որն յանդգնել էր վրդովել այս սուրբ վայրերի հանգիստը։ Ուրախ պատանու դէմքի վրայ այժմ նշմարւում էր յոգնածութեան հետքեր։ Նա իր հարևան զինուորների հետ համարեայ թէ չէր խօսում, այլ ուրիշների նման լուռ ու մտախոհ շարունակում էր իր ճանապարհը։

—«Պատանի զինուոր, ասաց մի ծերունի զօրական, դառնալով դէպի Վահունիկը, եթէ այսպիսի մի կիրճում մենք բաղդ ունեցանք հանդիպել մեր թշնամուն, դու կարող ես այսպիսի մի լեռան ի վեր մագլցել»։

—«Աւելի արագ քան այն թռչող արագիլը։ պատասխանեց պատանին. կամենաս փորձենք»։

—«Ո՛չ, փորձի ժամանակ չը կայ, բայց դու քո քաջութիւնը ցոյց տալու դէպքեր շատ պիտի ունենաս. օն ուրեմն, յառաջ, յառաջ»։

Զօրականը ծերունի Բարգէնի հին ընկերներից մէկն էր։ Նրա որդիներից մէկը Պարսկաստանում գերի էր ընկած, իսկ երկրորդ որդու հիւանդութեան պատճառով՝ նա ինքն էր գնում հայրենիքի փրկութեան համար կռւելու։

Երկրորդ օրւայ արևը մայր մտնելու մօտ էր, երբ մեր քանակը իր որոշեալ տեղը հասնելով հանգիստ առաւ։ Բարձր սարերի կանաչ և գեղեցիկ լանջերի վրայ եր-

կարաձգւեց մերոնց վրան-
ները։ Զինուորների մէջ տի-
րեց մի արտասովոր իրարան-
ցում. նրանք ամենքն էլ ըս-
կսեցին մաքրել իրանց շորե-
րը ու զէնքերը։ Հասան և
միւս նախարարների զօրա-
բանակները։ Զօրքի հրամա-
նատար Մամիկոնեան սպա-
րապետը հարկաւոր հրաման-
ները տալուց յետոյ՝ նախա-
րարների հետ առանձնացաւ
իշխանական վրանում։ Դըր-
սում, բաց օդի տակ, մի քա-
նի ձիաւորներով խմբուած
զինուորները երգում էին, պա-
րում, աղօթում և հանաքներ
անում։ Նրանք ամենքն էլ
սպասում էին մի հերոսական
վախճանի, ուստի կարելի ե-
ղածին չափ աշխատում էին
ուրախ ու զւարթ անցկաց-
նել իրանց կեանքի վերջին
ժամերը։ Թէ սպարապետին
և թէ նախարարներին ու
զինուորներին քաջ յայտի էր,
որ Թշնամին իրանցից շատ
հեռու չէ և եթէ խորամանկ
պարսիկը վաղ առաւօտեան
իրանց վրայ յարձակում չը
գործէ, իրանք մինչև կէս օր
կը զիմաւորեն նրան։ Եւ ա-
հա դրա համար էր, որ սպա-
րապետը հրամայել էր սով-
րականից աւել գիշերապահ-
ներ կանգնեցնել, որոնք պէտք
է հսկէին ու պահպանէին զօ-
րաբանակը բոլոր կողմերից։
Գիշերապահութեան համար
նշանակւած էր երրորդ վաշ-
տը, իրրև այդ օրը ամենից
քիչ յոգնած զինուորները։ Վաշ-
տը բաժանեցին չորս առան-
ձին խմբերի և կանգնեցրին
չորս ուղղութեամբ։ Դէպի
արևելք բացւող կիրճը պահ-
պանող զինուորների թւում
գտնւում էր մեր տասն և
չորս ամեայ գեղեցիկ Վահու-
նիկը։

Ժամը գիշերւան տասեր-
կուսը կը լինէր, զինուորներից
մի քանիսը ընկած փափուկ
հողի վրայ քնած էին, իսկ
մի քանի ուրիշները բոլորած
խօսում էին ու ծիծաղում։
Յանկարծ ժայռերի բացւած-
քից, նրանց հանդէպ երկարա-
ձիգ լեռների լանջերի վրայ
երևացին կրակի լոյսեր...

—«Զինուորներ, այս ինչ
լոյսեր են, բացականչեց Վա-
հունիկը, իր իրոխտ հայացքը
դարձնելով դէպի արևելք։

—«Երևի մեր ներքին գա-
ւառների զինուորներն են հան-
գիստ առնում այնտեղ, ուրիշ
ովքե՞ր պէտք է լինեն, պա-
տասխանեց մի այլ զինուոր։

—«Ո՛չ, պարսիկներն են
ասաց պատանին։

—«Անկարելի է, վրայ բե-
րեց մի ուրիշը, Թշնամին եր-
բէք չէր համարձակւի գիշե-
րով յարձակում գործել մեզ
վրայ, քանի որ նա ծանօթ
չէ մեր ձորերի անցքերի և
կիրճերի հետ»...

—«Այսպէս թէ այնպէս պէտք է ստուգել, ասաց պատանին։ Տղերք, վաղենք առաջ, գոնէ մօտիկից կը կարողանանք մի բան ստուգել»։

—«Վահունիկ մերոնք չեն, Աստուած վկայ, մերոնք չեն, մի այդպէս կրակոտուի, ասաց մի միջահասակ զինուոր, որը շրջապատողներից ամենից տարեցն էր։

—«Չի կարելի, պէտք է ստոյգ կերպով տեղեկանալ։ Օ՜ն ուրեմն ես կը վազեմ, իսկ ով ուզում է թող հետևի ինձ»։

Պատանին ուղղուեց. առաւ ձեռքը նիզակն ու ասպարը, երեսը խաչակնքեց և արծուի նման սլացաւ դէպի առաջ։ Շրջապատողները զարմացած նայում էին նրա յետևից։ Քար, ձոր, մացառ, ոչ մի բան նրան չէր արգելում. նա վազում էր շունչը կտրած ու հևալով։ Պատանին յանկարծ կանգ առաւ և սկսեց մտածել։ Նրա առաջ երկրաքաֆիզ համալեայ աննշմարելի ուղին տանում էր դէպի ձորը, իսկ իրան աւելի անհրաժեշտ էր գնալ լեռնալանջերով։ Նա մի ակնթարթում մի ինչ որ բան վճռելով՝ փոխեց իր ճանապարհը և սկսեց վեր մագլցել դէպի քարաժայռի կատարը։ Լուսնի փայլուն շողքերի տակ, մի ցցուած քարի գլխին կանգնած նա մի առ ժամանակ ականջ դրեց լսելու ձայներին, և իրաւ նրա ականջին հասաւ մի արտասովոր աղաղակ։ «Թշնամին է» մրմնջաց նա, «չէ՞ որ դառնալ, թէ քիչ էլ առաջ գնալ» քիչ էլ յառաջ, մի հաստատ բան իմանալու համար» որոշեց պատանին և ճանկելով սկսեց վեր մագլցել ուղղաձիգ քարաժայռը։ Բայց այս անգամ հազիւ մի քանի քայլ էր փախել, երբ յանկարծ պոկ եկաւ նրա ոտքերի տակ ցցող քարը և պատանին գլխի վայր շուռ շուռ եկաւ դէպի ձորակը։ Բայց բարեբաղտաբար մի քանի քարերի և մացառների հանդիպելով, նա դէմ առաւ նրանց և կարողացաւ մի վայրկեանի մէջ ուղղուել։ Պատանին ձեռքը տանելով դէպի գլուխը մի ծանր ախ քաշեց։ Նա ճակատի քրտինքը սրբելիս նկատեց, որ ձեռքերը կարմրել են, և իրաւ նրա գլխի և ճակատի պատուած տեղերից հոսում էր արիւնը։ Պատանին չը վարանեց երբէք. մի ակնթարթում հանեց գրպանից թաշկինակը, պինդ կապեց վէրքերը և սկսեց վեր բարձրանալ։ Դողդողուն ոտքերով և առաջւանից աւելի զգոյշ ու դանդաղ, պատանին բարձրանում էր ժայռի ահաւոր բարձրութիւնով։ Այդ րոպէին նա կանգ առաւ և մի

հայացք գցեց իր յետև տա-
րածուղ և քնի մէջ ընկղմած
հայոց բանակի վրայ։ Ապա
նա նորից սկսեց բարձրանալ
առանց հանգչելու, առանց
մի րոպէ անգամ կորցնելու։

Վերջապէս նա կանգ ա-
ռաւ, այս անգամ պատանին
հասել էր իր նպատակին։ Այդ
բարձրութեան վրայից նա
պարզ տեսաւ Թշնամու բա-
նակը, լուսաւորուած խա-
րոյկների բոցերով։ Երկար
զննելուց յետոյ հասկացաւ, որ
Թշնամին ևս իրանց մասին
տեղեկութիւն չունի. և թէ
նրանք էլ վրան են խփել մի-
միայն դիշերելու համար։ Նա
երկար ականջ դրեց դիշերա-
յին լռութեան մէջ արձա-
դանք գտնող ձայներին և լսեց
Թշնամու բանակի վայրենի
ու բարձր աղաղակները...

Պատանին յետ դարձաւ
և սկսեց կամաց կամաց վար
իջնել ահաւոր քարաժայռից։
Նրա ծնկները պաղում էին,
իսկ արիւնը հոսում էր Թաշ-
կինակի տակից նրա գեղեցիկ
պարանոցի վրայով։ Նա վեր-
ջապէս հասաւ ընկերներին։

—«Ի՞նչ տեսար, ի՞նչ լսե-
ցիր, հարցրին զինուորները մի-
ասին, երբ տեսան անվախ
պատանուն։

—«Մեր ներքին գաւառ-
ների զինուորներն են, պա-
տասխանեց Վահունիկը հեգ-
նորէն։

—«Ուղիղն ասա Վահու-
նիկ, ինքեօ են, հարցրեց մեզ
ծանօթ տարիքաւոր զինուորը,
ասա եթէ չես ուզում որ մենք
էլ գնանք»։

—«Թշնամին է, պատաս-
խանեց պատանի զինուորը
սառնասրտութեամբ։ Այդ րո-
պէին շրջապատող զինուորները
սարսափեցին, տեսնելով Վա-
հունիկի ահռելի կերպարանքը։

Նրա երեսն ու ոտքից
մինչև գլուխը հեղեղուած էր
արիւնով։

—«Ի՞նչ պատահեց քեզ
պատանի. և կամ դու ի՞նչպէս
կարողացար ստուգել թէ ար-
դարև Թշնամին է, նկատեց
տարիքաւոր զինուորը։

Վահունիկը ժանրաժաս-
նաբար պատմեց իր ճանա-
պարհորդութիւնը և իր լսածն
ու տեսածը։

Նրանք շտապեցին դէպի
սպարապետի վրանը։

(Կը շարունակուի)

Պ. Մոռռեանց

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

При каждомъ № „НИВЫ“, независимо отъ другихъ приложеній, **подписчики получатъ по одной книгѣ.** Новые подписчики, выписывающіе также (за 2 р., съ перес. 2 р. 50 к.) 10 книгъ соч. гр. А. К. Толстого за 1907 г., получатъ ихъ при одномъ изъ первыхъ №№ „Нивы“ 1908 г.

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1908 годъ

(39-й годъ изданія)

на еженедѣльн. иллюстриров.

ЖУРНАЛЪ

со многими приложеніями

НИВА

Гг. подписчики „НИВЫ“ получатъ въ теченіе **1908** года:

52 №№ художеств.-литературнаго журнала „НИВА“, заключающаго въ себѣ романы, повѣсти и разсказы; гравюры, рисунки и иллюстраціи современ. событій.

40 **КНИГЪ** „Сборника Нивы“, отпечатанныхъ четкимъ шрифтомъ, на хорошо глазированной бумагѣ и содержащихъ:

ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ въ

28 КНИГАХЪ **Глѣба Ив. УСПЕНСКАГО**

Съ обширной критико-біографической статьею Н. К. МИХАЙЛОВСКАГО.

Глѣбъ Успенскій—писатель-гражданинъ въ высшемъ смыслѣ этого великаго и близкаго намъ отнынѣ слова. Въ сочиненіяхъ его читатель встрѣтитъ всѣхъ представителей общественныхъ слоевъ дореформенной и пореформенной Россіи. Глѣбъ Успенскій, по мѣткому выраженію критики, протягиваетъ правую руку гр. Льву Толстому, а лѣвую Салтыкову-Щедрину, соединяя своимъ писательскимъ геніемъ этихъ двухъ корифеевъ нашей литературы. Общепризнанный всей русской критикой, истинный художникъ слова, Глѣбъ Успенскій, какъ тонкій психологъ, увлекательный и поучительный повѣствователь, по живости, мѣткости и типичности языка не имѣетъ себѣ равнаго.

ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ въ

10 КНИГАХЪ **Гергарта ГАУПТМАНА**

Въ образцов. переводѣ извѣстн. писателей, съ критико-біографич. очеркомъ.

Гауптманъ, стоящій во главѣ всей современной драматической литературы, какъ писатель, представляетъ собою рѣдчайшее соединеніе философа съ поэтомъ, безпощаднаго реалиста съ тонкимъ лирикомъ. Произведенія Гауптмана обошли весь міръ и ставились на всѣхъ выдающихся сценахъ Западной Европы и у насъ, въ Россіи. Пьесы Гауптмана глубоко интересны не только на сценѣ, но и въ чтеніи: онѣ читаются, какъ романы, полныя драматическаго дѣйствія и движенія, всегда захватывающія искусно задуманной и выполненной фабулой.

Дневникъ и письма въ

2 КНИГАХЪ **гр. Алексѣя ТОЛСТОГО**

Касаясь самыхъ основныхъ вопросовъ жизни, литературы и искусства, „Дневникъ“ и „Письма“ гр. А. К. Толстого явятся идейнымъ дополненіемъ къ его сочиненіямъ въ видѣ IV тома (11-й и 12-й книгъ) „Полнаго Собранія Сочиненій“.

12 **КНИГЪ „Ежемѣсячныхъ литературныхъ и популярно-научныхъ Приложеній“**, содержащихъ романы, повѣсти, разсказы, популярно-научныя и критическія статьи современныхъ авторовъ съ иллюстраціями и отдѣлы библіографіи, смѣси, шахматовъ и шашекъ, задачъ и разныхъ игръ.

12 №№ „Парижскихъ модъ“. До 200 столбцовъ текста и 300 модныхъ гравюръ. Съ почтовымъ ящикомъ для отвѣтовъ на разнообразные вопросы подписчиковъ.

12 **ЛИСТОВЪ** рисунковъ (около 300) для рукодѣльныхъ, вышильныхъ работъ и для выжиганія и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину.

1 „ОТѢННОЙ КАЛЕНДАРЬ“ на 1908 годъ, отпечатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ“ со всѣми приложеніями на годъ:

въ С.-Петербургѣ: безъ доставки—**6 р. 50 к.** съ доставкой—**7 р. 50 к.**

Безъ доставки: 1) въ Москвѣ, въ конторѣ Н. Печковской—7 р. 25 к.; 2) въ Одессѣ, въ книжн. магаз. „Образованіе“—7 р. 50 к.

Съ пересылкою во всѣ мѣста Россіи . . . . 8 р.

За границу—**12 р.**

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА ПЛАТЕЖА въ 2, 3 и 4 СРОКА.

Новые подписчики, желающіе получить, кромѣ „Нивы“ 1908 г. со всѣми ея приложеніями, еще 10 книгъ соч. гр. А. К. ТОЛСТОГО за 1907 г., доплачиваютъ единовременно при подпискѣ: безъ доставки въ СПБ. — 2 руб.; съ дост. въ СПБ. и съ пересылкой иногороднымъ и за границу—2 р. 50 к.

Иллюстрированное объявленіе о подпискѣ высылается безплатно.

Адресъ: С.-Петербургъ, въ Контору журнала „НИВА“, улица Гоголя, № 22.

ԱՄԲՈՂՋ 1908 Թ. ԱՂՕՒՍՏԱՆ ԿԱՆԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՆԻՒԱ

ՀԱՐԱՒԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Տարին բաժանորդագրուելով 10 ր. Բաւականէ

Ի Փարիսեան համար, Ընդհանուր Բաժանորդների համար տարին 6 դրան, Եւրոպայի 30 Ֆր.

Հասցէ՝ Տիֆլիս Редакція «Мшакъ»

Tiflis. Rédaction du journal «Mschak»

XXXVI ՏԱՐԻ 1908

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ

Բաժանորդագրութիւնը 6 ամսով, տարի կամ կէս տարի առնելու համար:

Խմբագրատուն գտնուի Ս.Ռ. ԱՂՆԱՆՑ

Մեր հասցէն Փիլիս, Գոլցեխովոյ 7, Լուսաւորչի խաչատուր.

ԲԱՑԻՄԸ Է 1908 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

XXVI-ՐԴ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XIX

Հանդէսները կը հրատարակուեն 1908 թ. այնքան № №, որքան կը թելադրէ հայ վճարող բաժանորդների թիւը։

ԱՂԲԻՒՐԻ *տարեկան գինը 3 ր. (արտասահման 5 ր.)* ՏԱՐԱԶԻ *6 ր. (արտասահման 10 ր.) երկուսը միասին 10 ր. (արտասահման 50 ֆր.)*

Յաւելուածներն ու անակնկալ պրէմիաները տանում են ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ *միևնոյն հաւասարով տարեկան բաժանորդները։*

Առանց բացառութեան Նոր-տարուայ № №-ը կուղարկուի հին բաժանորդներից միայն նրանց, որոնք նորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը։

—

ԱՂԲԻՒՐԻ *և* ՏԱՐԱԶԻ *աշակիցներից յատուկ խնդրւում է, որ նրանք չը հաղորդեն բաժանորդի հասցէ առանց պրամի։ Խմբագրութիւնն իր աշակիցներին, գործակալներին չէ ուղարկում նամակներ, անդորրագրեր և ոչ էլ բաժանորդներին պօստային փոխառնադիրներ։*

ԱՂԲԻՒՐԻ *Դեկտեմբերի №-ում կը տպագրուեն այս 1907 թ. մեր բաժանորդների անուանացուցակը և նրանց վճարած դումարի քանակը ամենամանրամասն։ Կարծում ենք, որ այդ չոր թուերը կարող կը լինեն հայի, իր կուլտուրականութեամբ պարծեցող հայի դիմակը շպրտելու։*

Ապա կը տպագրւի XXV տարւայ հաշիւ, փաստաթղթերով։

—

Հասցէ՝ Тифлис. Редакція «Агбюр» *կամ* «Тараз». Tiflis (Caucase) Rédaction «Agbur» *կամ* «Taraz»։

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան